ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՌԱՖԻԿ ԳՈՒՐԳԵՆԻ

ԱՆՋԱՏՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ. ԻՍՊԱՆԻԱՅՈՒՄ ԱՆՋԱՏՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱԼՈՆԻԱՅԻ ՕՐԻՆԱԿՈՎ

ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2022

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

АВЕТИСЯН РАФИК ГУРГЕНОВИЧ

ПРОБЛЕМА СЕПАРАТИЗМА В ГОСУДАРСТВАХ-ЧЛЕНАХ ЕВРОПЕЙСКОГО СОЮЗА: ОСОБЕННОСТИ СЕПАРАТИЗМА В ИСПАНИИ НА ПРИМЕРЕ КАТАЛОНИИ

Диссертация на соискание ученой степени кандидата политических наук по специальности 23.00.02 - "Политические институты и процессы"

АВТОРЕФЕРАТ

ЕРЕВАН 2022

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայում:

Գիտական ղեկավար՝ քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ **Մ. Մ. Մարգարյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ քաղ. գիտ. դոկտոր, դոցենտ՝ **Վ. Ս. Դավթյան**
քաղ. գիտ. թեկնածու, դոցենտ՝ **Է. Ա. Քալանթարյան**

Առաջատար կազմակերպություն՝ **Հայ-ռուսական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2022 թ. սեպտեմբերի 28-ին, ժամը 13:00-ին, ԵՊՀ-ում գործող ՀՀ ԲՈԿ-ի «Քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ» 056 մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ ՀՀ ք. Երևան 0025, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2022 թ. օգոստոսի 10-ին:

056 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ **Վ. Ս. Պետրոսյան**

Тема диссертации утверждена в Академии государственного управления Республики Армения.

Научный руководитель: доктор политических наук, профессор **М. М. Маргарян**

Официальные оппоненты: доктор политических наук, доцент **В. С. Давтян**
кандидат политических наук, доцент **Э. А. Калантарян**

Ведущая организация: **Российсково-Армянский университет**

Защита диссертации состоится 28 сентября 2022г. в 13:00 часов на заседании действующего в ЕГУ РА специализированного совета 056 “Политология и международные отношения” ВАК РА. (адрес: РА, г. Ереван 0025, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в библиотеке ЕГУ.
Автореферат разослан 10-го августа 2022 г.

Научный секретарь специализированного совета 056,
кандидат исторических наук, доцент **В. С. Петросян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Եվրոպական միության (այսուհետև՝ ԵՄ) տարածաշրջանային անջատողական շարժումների ակտիվության մեծացումն անմիջականորեն սպառնում է ԵՄ-ի անդամ-պետությունների տարածքային կազմակերպման ձևի փոփոխմանը, ԵՄ-ի քաղաքական համակարգի և նրա ինստիտուցիոնալ մարմինների կայուն կենսագործունեությանը: Միջազգային հարաբերությունների Վեստֆալիան համակարգով ձևավորված «ազգ-պետությունները» ԵՄ-ի ինտեգրային գործընթացներում ենթարկվեցին ինստիտուցիոնալ կերպափոխման: ԵՄ-ի բազմամակարդակ կառավարման համակարգում ձևավորվեցին «վերազգային-ազգային-տարածաշրջանային» ինստիտուցիոնալ փոխհարաբերությունների նոր մոդելներ:

«Սառը» պատերազմի ավարտից հետո Եվրոպան նորովի բախվեց անջատողականության ակտիվացման խնդրին, ինչը որոշակի ազդեցություն է թողել ինչպես Եվրոպական միության միասնականության գաղափարի, այնպես էլ նրա հասարակության քաղաքական զարգացման գործընթացի վրա: Լինելով ամենամեծ էթնիկ բազմազանություն ունեցող քաղաքական համակարգերից մեկը՝ ԵՄ-ն զգալի դժվարությունների է բախվում անդամ-պետությունների ենթամիավորումների կենտրոնախույս միտումների հաղթահարման հարցում: ԵՄ-ի կազմից Մեծ Բրիտանիայի առանձնացումից հետո ստեղծված հասարակական-քաղաքական ճգնաժամը, ահաբեկչական գործողությունները, ազգայնականության ակտիվացումը, ներգաղթյալների հոսքի աճը, բազմամշակութայնության քաղաքականության ձախողումը, ինչպես նաև կորոնավիրուսային համավարակով պայմանավորված տնտեսական ճգնաժամի խորացումը մեծապես նպաստում են կենտրոնախույս միտումների ակտիվացմանը: Ուստի ԵՄ-ի տարածաշրջանային անջատողականության հիմնախնդիրների ուսումնասիրումը դառնում է առավել քան արդիական:

Անջատողականության հիմնախնդրի և Կատալոնիայի անջատողականության ակտիվացման վրա ԵՄ-ի ինտեգրային գործընթացների ազդեցության խնդիրների ուսումնասիրումն արդիական է նաև եվրոպական տարածության անկայունության կանխատեսման և անվտանգության ապահովման համատեքստում: Արդի քաղաքական գործընթացներն ապացուցում են, որ անջատողականությունը դուրս է եկել ներքաղաքական գործընթացների շրջանակներից և կրում է միջազգային բնույթ: Այդ դիտանկյունից թեմայի ուսումնասիրումը կարող է օգտակար լինել նաև ԵՄ-ի՝ որպես «ուժային կենտրոնի» կենսունակության, նրա գլոբալ դերի նվազման և կոլեկտիվ թուլության բացահայտման համար:

Կատալոնիայի անջատողականության ուսումնասիրումը կարևորվում է այն պատճառով, որ այն, լինելով աշխարհի ամենաակտիվ անջատողական շարժումներից մեկը, ունենալով տարածաշրջանային ինքնավարության լայն

կարգավիճակ, մեծ ազդեցություն ունի ոչ միայն Իսպանիայի, այլև ԵՄ-ի քաղաքական համակարգի կայունության վրա: 2017 թ. Կատալոնիայի անկախության հանրաքվեի անցկացմամբ քաղաքական ճգնաժամ ստեղծվեց ոչ միայն Իսպանիայում, այլև դա մեծ ազդեցություն ունեցավ ԵՄ-ի քաղաքական գործընթացների վրա՝ բացահայտելով էթնոքաղաքական խնդիրների կարգավորման ԵՄ-ի ինստիտուցիոնալ առումով ոչ կենսունակ լինելը: ԵՄ-ի որոշումների կայացման գործընթացում Կատալոնիայի տարածաշրջանային ինստիտուտներն ունեն որոշակի ազդեցություն, որը բարձրացնում է Կատալոնիայի քաղաքական ինքնուրույնության աստիճանը, ուստի՝ կարևորվել է նաև Կատալոնիայի անջատողականության ակտիվացման վրա ԵՄ-ի ինտեգրային գործընթացների ազդեցության բացահայտման խնդիրների դիտարկումը:

Անջատողականությունը՝ որպես սոցիալ-քաղաքական երևույթ անմիջականորեն առնչվում է միջազգային իրավունքի հիմնարար դրույթների՝ պետության տարածքային ամբողջականության և ժողովուրդների ինքնորոշման իրավունքի հետ: Հետևաբար անջատողականության ուսումնասիրումը իրավական և կոնֆլիկտաբանական հետազոտությունների ոլորտներում բավականին դժվարանում է: Տվյալ հետազոտությունում անջատողականությունը դիտարկված է ոչ միայն Իսպանիայի քաղաքական համակարգի, այլև ԵՄ-ի ինտեգրային գործընթացների և նրա եռաստիճան՝ վերազգային, ազգային և տարածաշրջանային ինստիտուցիոնալ փոխգործության համատեքստում:

Անջատման իրավունքը համարվում է ժողովուրդների ինքնորոշման իրավունքի տարրերից մեկը, ուստի թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև Ղարաբաղյան հիմնախնդրի ուսումնասիրմամբ. հաճախ, խեղաթյուրելով իրականությունը, Արցախյան շարժումը ներկայացվում է որպես անջատողական, որն արդի քաղաքագիտական ընկալումներում բացասական երանգ ունի: Այսպիսի մոտեցումը միտված է հիմնախնդրի բուն պատճառների խեղաթյուրմանը, Ղարաբաղյան հիմնախնդրի և իրավական, քաղաքական այլ հիմքեր ունեցող էթնիկ հակամարտությունների նույնականացնելուն: Ըստ այդմ՝ անհրաժեշտություն կա նորովի մեկնաբանելու անջատողականության, սեցեսիայի*, ինքնավարության և ինքնիշխանության հայեցակարգային հիմքերը, որը կնպաստի ԵՄ-ի տարածաշրջանային անջատողական շարժումների և Ղարաբաղյան հիմնախնդրի առանձնահատկությունների տարբերակմանը:

Կատալոնիայի անջատողական շարժումը, դասվելով ծայրամասային ազգայնականության դրսևորումների շարքին և ունենալով սոցիալ-տնտեսական

---

* Քանի որ հայերենում և՛ «*separatism, сепаратизм*» և՛ «*secessionism, сецессионизм*» եզրույթները թարգմանվում են որպես «անջատողականություն» կամ «անջատում», բայց իմաստային առումով միանգամայն տարբեր հասկացություններ են, ուստի որտեղ այդ երկու հասկացություններն էլ վկայակոչված են, այսուհետև կիրառում ենք «սեցեսիա» տերմինը:

խորքային պատճառներ, ունի բավականին շատ ընդհանրություններ արևմտաեվրոպական այլ անջատողական շարժումների հետ: Կատալոնիայի անջատողականության հաջողության հասնելը կարող է նախադեպ դառնալ ԵՄ-ի այլ տարածաշրջանային անջատողական շարժումների համար: Ուստի Իսպանիայի կառավարության և Կատալոնիայի անջատողական շարժման վարքային ռազմավարությունների վերլուծությամբ հնարավոր կլինի նաև բացահայտել անջատողականության դեմ պայքարի ժողովրդավարական մեթոդների առանձնահատկությունները:

Թեմայի գիտական մշակվածության աստիճանը: Անջատման իրավունքի և անջատողականության քաղաքական հետևանքներին առնչվող խնդիրների ուսումնասիրությունը մշտապես եղել է քաղաքագետների և իրավագետների ուշադրության կենտրոնում: Անջատողականության հիմնախնդիրը և Կատալոնիայի անջատողականության ակտիվացման վրա ԵՄ-ի ինտեգրային գործընթացների ազդեցության հիմնախնդիրները հայ քաղաքագիտական շրջանակների կողմից բավականաչափ ուսումնասիրված չեն: Անջատողականության հիմնախնդրին և ԵՄ-ի քաղաքական համակարգին վերաբերող հետազոտությունների մեծ մասը նվիրված են ինքնորոշման իրավունքի իրացման խնդիրներին, ԵՄ-ի ինտեգրային գործընթացներին, ԵՄ-ի հարավկովկասյան քաղաքականությանը, և այլն:

Այդուհանդերձ, կարող ենք նշել, որ անջատողականության հասկացութային ապարատին և Կատալոնիայի անջատողականության ակտիվացման վրա ԵՄ-ի ինտեգրային գործընթացների ազդեցության խնդիրներն ուսումնասիրվել են նորարարական մոտեցումներով, հանգամանորեն հետազոտվել են նաև ԵՄ-ի բազմաշերտ քաղաքական համակարգի, «վերազգային-ազգային-տարածաշրջանային» ինստիտուցիոնալ փոխգործության առանձնահատկությունները:

ՀՀ-ում քաղաքական արդիականացման հիմնախնդիրները դիտարկել է Մ. Մարգարյանը՝ ուսումնասիրելով ազգ-պետությունների բնականոն արդիականացման արժեքաբանությունը, ինչպես նաև քաղաքական զարգացման ճգնաժամերի հաղթահարման կառուցակարգերը[1]: Հայաստան-Եվրոպական միություն հարաբերությունների ընթացքին և զարգացման հեռանկարներին անդրադարձել է Գ. Քեռյանը[2]: Ինքնորոշման իրավունքի կարգավիճակը, կիրառման չափանիշներն ու պայմանները հանգամանորեն

[1] Մարգարյան Մ., Քաղաքական արդիականացման և զարգացման հիմնահարցեր, «Պետական ծառայություն» հր., Երևան, 2004, 261 էջ: Մարգարյան Մ., Քաղաքական արդիականացման հրամայականները Հայաստանի Հանրապետությունում, «Պետական ծառայություն» հր., Երևան, 2019, 312 էջ:

[2] Քեռյան Գ., Սիմոնյան Հ., Հայաստան-Եվրոպական միություն. հարաբերությունների ընթացքը և զարգացման հեռանկարները, ՀՊՃՀ հրատ., Երևան, 2005, 63 էջ:

հետազոտել է Տ. Թորոսյանը [3] : Արևմտյան ժողովրդավարությունների քաղաքական համակարգերը հանգամանորեն հետազոտել է Ա. Ալեքսանյանը[4]: Էթնոքաղաքագիտության և ազգային անվտանգության հիմնախնդիրներն ուսումնասիրել է Հ. Քոթանջյանը՝ անդրադառնալով էթնոքաղաքագիտության խնդրայնությանը և հասկացութային ապարատին [5] : Եվրոպագիտության հիմունքները, ԵՄ-ի ինստիտուցիոնալ զարգացումը, ներքաղաքական կյանքի առանձնահատկություններն ուսումնասիրել է Ն. Գալստյանը [6] : Եվրոպական ազգայնականության առանձնահատկությունները հետազոտել է Ա. Խաչատրյանը[7]:

Չնայած նրան, որ անջատողականությունն առաջին անգամ քաղաքական իմաստով կիրառվել է դեռևս Հին Հռոմում, տարաբնույթ մեկնաբանությունների արժանացել է սկսած 16-րդ դարից: Ֆեդերալիզմին, ունիտար պետությանը և անջատողականությանը վերաբերող մի շարք հիմնախնդիրներ են քննարկել միջնադարյան քաղաքական մտքի ներկայացուցիչներ Յ. Ալթուսիուսը և Ժ. Բոդենը, որոնք իրարամերժ կարծիքներ ունեին արդյունավետ պետական կառավարման համակարգի և անջատողականության մասին[8]: Հարկ է նշել, որ անջատողականության և իշխանության բաժանման, պետության մասնատման, անջատման իրավունքի, ներքաղաքական ճգնաժամների հաղթահարման հիմնախնդիրները խորապես ուսումնասիրել են մի շարք արևմտյան հետազոտողներ, որոնցից կարելի է առանձնացնել՝ Ա. Պավկովիչին և Պ. Ռադոնին[9], Բ. Ռոններին և Լ. Ռահիննիին[10], Ա. Հերակլիդեսին[11], Ջ. Սորենսին[12], Կ.

---

[3] Թորոսյան Տ., Ինքնորոշման իրավունքի կարգավիճակը, կիրառման չափանիշներն ու պայմանները, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 2008, № 1, էջ 18-37:

[4] Ալեքսանյան Ա., Արևմտյան ժողովրդավարությունների քաղաքական համակարգերը. տեսություն և արդիականություն, Վան Արյան, Երևան, 2009, 300 էջ:

[5] Քոթանջյան Հ., Հակամարտության էթնոքաղաքագիտություն: Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները, ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, Երևան, 2010, 764 էջ:

[6] Գալստյան Ն., Եվրոպագիտության հիմունքներ, ուսումնական ձեռնարկ, IBF International Consulting, Երևան, 2017, 485 էջ:

[7] Խաչատրյան Ա., Ազգայնականությունը Եվրոպայում 20-րդ դարի վերջին, Զանգակ-97, Երևան, 2004, 144 էջ:

[8] Montani D., The Right to Secede: A Comparative Analysis, LUISS Guido Carli, Roma, 2015, 147 p.

[9] Pavkovic A., Radon P., Secession, Ashgate Research Companion, Farnham, 2011, 592 p.

[10] Roehner B., Rahilly L., Separatism and disintegration, University of Paris 6 (Pierre and Marie Curie), Paris, 2016, 376 p.

[11] Heraclides A., Secession, Self-determination and Non-Intervention, Journal of International Affairs, New York, 1992, V. 45:2, pp. 399-420.

[12] Sorens J., Secessionism. Identity, Interest, and Strategy, McGill-Queen's University Press, New York, 2012, 240 p.

Սանստեինին[13], Ա. Բյուկենանի [14], Պ. Հիլպոդին[15] և այլոց:

Անջատողականության համակողմանի ուսումնասիրության համար քննարկվել են ազգայնականությանը վերաբերող մի շարք հիմնախնդիրներ, քանի որ անջատողականությունն ուղղակիորեն կապված է լինում ազգայնականության դրսևորման որևէ տեսակի հետ: Ազգայնականությանը վերաբերող հիմնախնդիրների հետազոտման գործում մեծ ավանդ ունեն Է. Գելները[16], Է. Սմիթը[17], Ջ. Մեյելը[18], Մ. Հեչթերը[19], Դ. Հորովիցը[20], Ա. Ֆինլեյսոնը[21] և այլոք:

ԵՄ-ի ինտեգրային գործընթացների և ԵՄ-ի քաղաքական համակարգում Կատալոնիայի անջատողականության ուսումնասիրման հետ կապված արժեքավոր են Ն. Բոշի և Ջ. Դուրանի[22], Դ. Մորոյի և Է. Վոերիցի[23], Ռ. Կաստալդիի[24], Ջ. Մաքկորմիկի[25], Մ. Սինի և Ն. Բորագանի[26], Ա. Վիների և Թ.

---

[13] Sunstein C., Constitutionalism and Secession, The University of Chicago Law Review, Approaching Democracy: A New Legal Order for Eastern Europe, Chicago, 2008, Vol. 58 Iss. 2, Article 9, pp. 633-670.

[14] Buchanan A., Theories of Secession, Philosophy and Public Affairs, Princeton, 1997, V. 26, N. 1, pp. 31-61.

[15] Hilpold P., Autonomy and Self-determination, Edward Elgar Publishing Limited, Cheltenham, 2018, 368 p.

[16] Գելներ Է., Ազգերը և ազգայնականությունը: Անցյալի նոր հեռանկարները, Հայաստան հր., Երևան, 2003, 314 էջ:

[17] Smith A., Nationalism: Theory, Ideology, History, Polity Press, Malden, 2010, 2nd edition, 200 p.: Smith A., Nationalism and Modernism, Routledge, New York, 2003, 288 p.

[18] Mayall J., Irridentist and Secessionist Challenges, Oxford readers Nationalism, ed. Hutchinston J. and Smith D., Oxford University Press, New York, 1994, 378 p.

[19] Hechter M., Containing Nationalism, Oxford University Press, New York, 2000, 272 p..

[20] Horowitz D., Irredentas and Secessions: Adjacent Phenomena, Neglected Connections, International Journal of Comparative Sociology, SAGE publications, Berkeley, 1992, 23(1-2), pp. 58-80.

[21] Finlayson A., Nationalism, Political Ideologies, An Introduction, Routledge, London, 2003, 347 p.

[22] Bosch N., Duran J., Fiscal Federalism and Political Decentralization: Lessons from Spain, Germany and Canada, Edward Elgar Publishing, Northapton, 2008, 279 p.

[23] Muro D., Woertz E., Secession and Counter-secession: An International Relations Perspective, CIDOB, Barcelona, 2018, 108 p.

[24] Castaldi R., A federalist framework theory of European integration, Centro studi federalism, Moncalieri, 2007, 90 p.

[25] McCormick J., Understanding the European Union: A Concise Introduction, Palgrave Macmillan, London, 2011, 256 p.

[26] Cini M., Borragan N., European Union Politics, Third edition, Oxford University press, Oxford, 2010, 485 p.

Դիեզի[27] աշխատությունները:

Կատալոնիայի անջատողական շարժման վերլուծության համար կարևոր նշանակություն ունի նաև խաղերի տեսության՝ միաժամանակյա և հաջորդական գործողությունների տրամաբանությամբ մաթեմատիկական մոդելավորման իրականացումը: Կատալոնիայի էթնոքաղաքական հակամարտության վերլուծությանը, կողմերի վարքային ռազմավարությունների մշակմանը և Կատալոնիայի անջատողականության հետագա զարգացումների ուսումնասիրմանը նպաստել են խաղերի տեսությանը վերաբերող մի շարք աշխատություններ[28]:

Վերոնշյալ հեղինակների աշխատությունների ուսումնասիրությունը հնարավորություն է տվել նորովի մեկնաբանելու անջատողականության իրավական և քաղաքական առանձնահատկությունները, ԵՄ-ի քաղաքական համակարգում Կատալոնիայի անջատողականության դրսևորումները, ԵՄ-ի «վերազգային-ազգային-տարածաշրջանային» ինստիտուցիոնալ մարմինների փոխգործության մեխանիզմները:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսական աշխատանքի նպատակն է վերհանել անջատողականության հիմնախնդրի քաղաքական չափումները, բացահայտել Իսպանիայում Կատալոնիայի անջատողականության առանձնահատկությունները և Կատալոնիայի անջատողականության ակտիվացման վրա ԵՄ-ի ինտեգրային գործընթացների ազդեցությունը:

Առաջադրված նպատակի իրագործման համար անհրաժեշտ է լուծել որոշ հետազոտական խնդիրներ: Դրանցից են.

- Վերլուծել անջատողականության հայեցակարգային հիմքերը, անջատողականության առաջացման պատճառները և ակտիվացմանը նպաստող գործոնները:
- Վերհանել անջատողականության քաղաքական և իրավական մեկնաբանությունների առանձնահատկությունները:
- Պարզել ԵՄ-ում գործող անջատողական շարժումների հիմնական տիպերը:

---

[27] Wiener A., Diez T., European Integration Theory, second edition, Oxford University Press, New York, 2009, 295 p.

[28] Raiffa H., Negotiation Analysis: The Science and Art of Collaborative Decision Making. First Harvard University Press paperback edition, London, 2007, 576 p.: Dixit A., Skeath S., D. Reiley. Games of Strategy. W. W. Norton and Company, London, 2015, Ed. 4, 732 p.: Neumann J., Morgenstern O., Theory of Games and Economic Behavior, Princeton University Press, Princeton, 1953, 776 p.: Kremenyuk V., International Negotiation: Analysis, Approaches, Issues, Jossey–Bass A Wiley Company, San Francisco, 2002, 592 p.: Шеллинг Т., Стратегия конфликта, ИРИСЭН, М:, 2007, 376 с.

• Վերհանել Իսպանիայի կենտրոնական իշխանության և ազգային ինքնավար համայնքների ինստիտուցիոնալ փոխհարաբերությունների առանձնահատկությունները:

• Մշակել Կատալոնիայի անջատողական հակամարտության վերլուծության նոր ռազմավարություն:

• Վերլուծել Իսպանիայի կենտրոնական իշխանության և Կատալոնիայի անջատողական շարժման վարքային ռազմավարությունները (հնարավոր գործողությունների հավանականությունը):

• Բացահայտել անջատողականության դեմ պայքարի արդյունավետ եղանակները, և Կատալոնիայի անջատողականությանը հակազդելու Իսպանիայի կիրառած գործիքակազմը:

• Վերհանել ԵՄ-ի ինտեգրային հարաբերությունների խորացման և Կատալոնիայի անջատողականության ակտիվացման միջև եղած կապը:

• Բացահայտել ԵՄ-ի որոշումների կայացման գործընթացում Կատալոնիայի տարածաշրջանային ինստիտուտների ունեցած դերակատարությունը:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը անջատողականության հիմնախնդրի քաղաքական չափումների ուսումնասիրումն է: Ատենախոսության առարկան Իսպանիայում Կատալոնիայի անջատողականության հիմնախնդրի դիտարկումն է, ինչպես նաև Կատալոնիայի անջատողականության ակտիվացման վրա ԵՄ-ի ինտեգրային գործընթացների ազդեցության բացահայտումը:

Հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմքերը: Ատենախոսության տեսական հիմքում ընկած են անջատողականության, ազգայնականության, ինտեգրացիայի և այլ հայեցակարգային հասկացություններ, որոնք հնարավորություն են տալիս տարբեր մոտեցումներով վերլուծելու ԵՄ-ում Կատալոնիայի անջատողականության հիմնախնդիրը: Այդ նպատակով օգտագործվել են տարբեր մենագրություններ, վերլուծական հոդվածներ, միջազգային և ներքին իրավական փաստաթղթեր, հասարակական հարցումների տվյալներ և այլն:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքում ընկած են վերլուծության դիալեկտիկական, համեմատական, իրավական, վարքաբանական, վերլուծական-կանխատեսական, մաթեմատիկական մոդելավորման և այլ մեթոդներ:

Հետազոտության գիտական նորույթը: Թեմայի բազմաշերտությունը ենթադրում է ԵՄ-ի քաղաքական համակարգում Կատալոնիայի անջատողականության հիմնախնդրի համակարգված ուսումնասիրում՝ ԵՄ-ի ինտեգրային գործընթացների ու ինստիտուցիոնալ փոխգործության պայմաններում: Հետազոտությունում փորձ է արված վերլուծելու Կատալոնիայի անջատողականության հիմնախնդիրը՝ առանձնակի ուշադրություն դարձնելով անջատողականության հայեցակարգային հիմքերին, անջատողականության

ակտիվացման պատճառներին, անջատման իրավական և քաղաքական կողմերին, Իսպանիայի կառավարության և Կատալոնիայի ինքնավար համայնքի ինստիտուցիոնալ փոխհարաբերություններին, Կատալոնիայի անջատողականությանը հակազդելու Իսպանիայի քաղաքականությանը, ԵՄ-ի և Կատալոնիայի ինստիտուցիոնալ փոխգործության խնդիրներին: Ըստ այդմ՝ արձանագրել ենք գիտական նորույթ պարունակող հետևյալ արդյունքները.

1. Հիմնավորվել է անջատողականության հայեցակարգային նոր հիմքերի ներդրման անհրաժեշտությունը՝ այն ներկայացնելով որպես քաղաքական գործընթաց, որը դրսևորվում է ինքնիշխան պետության տարածքում էթնիկ միավորումների անկախության, ինքնավարության տրամադրման կամ ինքնավարության լիազորությունների մեծացման քաղաքական պահանջով, որը պարունակում է հակահամակարգային տարրեր, սպառնում է քաղաքական ինստիտուտների կայուն կենսագործունեությանը և պետության կառուցվածքային ձևի փոփոխմանը:

2. Կազմվել է անջատողական շարժումների դասակարգման նոր մոդել. ըստ անջատողական շարժումների սահմանած նպատակայնության ու արդյունքի (սեցեսիական, իռիդենտական (սեցեսիական-միավորող), միավորող, ինքնավարության ձգտող, բաժանման ձգտող) և ըստ անջատողականության առավել ցայտուն արտահայտված գործոնների (էթնիկ, լեզվական, ծայրամասային):

3. Իսպանիայի վարչատարածքային բաժանմանը վերաբերող սահմանադրահիրավական կարգավորումների վերլուծության արդյունքներով պարզվել է, որ Իսպանիայի «պատմական ազգությունների» (*historic nations*) անջատողականության ակտիվացումը կապված է կենտրոնական իշխանության՝ ինքնավար համայնքներից յուրաքանչյուրի հետ ունեցած ինստիտուցիոնալ ասիմետրիկ իրավահարաբերություններով, «ազգությունների» և «տարածաշրջանների» կարգավիճակի հավասարեցմամբ:

4. Մշակվել է անջատողական հակամարտությունների և ներքաղաքական ճգնաժամների վերլուծության նոր ռազմավարություն, որը ենթադրում է մրցակիցների բոլոր նախորդ քայլերի ու ռազմավարությունների դիտարկում, «խաղի» ընդհանուր տրամաբանության որոշում (զրոյական գումարով կամ համագործակցային, վերջավոր կամ անվերջ կրկնվող, միաժամանակյա կամ հաջորդական գործողություններով, ամբողջական կամ ոչ ամբողջական տեղեկույթով), կողմերի մտադրությունների, հնարավորությունների, գործողությունների հավանականության որոշում, գործողությունների օպտիմալ ռազմավարության մշակում, լավատեսական, հոռետեսական, և համագործակցային սցենարների մշակում:

5. Խաղերի տեսության հաջորդական գործողությունների մաթեմատիկական մոդելավորմամբ վերլուծվել են Իսպանիայի կենտրոնական իշխանության և Կատալոնիայի անջատողական շարժման «վարքային»

ռազմավարությունները, ինչպես նաև որոշվել է խաղի «հավասարակշռման» ռազմավարությունը:

6. Բացահայտվել են անջատողականության դեմ պայքարի արդյունավետ եղանակները. տարածքային պահանջների վիճարկումը և քաղաքական անհամաձայնության հայտնումը, միջազգային ներգրավվածության, ինքնուրույնության ձեռքբերման, միջազգային ճանաչման կանխումը, բազմամշակութայնության քաղաքականության վերանայումը (այն ուղղելով ոչ թե ներգաղթյալների ինտեգրմանը, այլ ազգային համայնքների անջատողական դրսևորումների զսպմանը) դիտարկվել են որպես անջատողականության դեմ պայքարի ոչ բռնի մեթոդներ:

7. Հիմնավորվել է ԵՄ-ի ինտեգրային գործընթացների, տարածաշրջանային քաղաքականության, բազմամակարդակ կառավարման, հակակշիռների և փոխզսպումների մեխանիզմների ազդեցությունը Կատալոնիայի անջատողականության արմատականացման և Իսպանիայում «կենտրոն-պերիֆերիա» քաղաքական հարաբերությունների անկենսունակության վրա:

Հետազոտության գիտատեսական և կիրառական նշանակությունը: Ատենախոսական աշխատանքի գիտատեսական նշանակությունը պայմանավորված է Կատալոնիայի անջատողականության և դրա ակտիվացման վրա ԵՄ-ի ինտեգրային գործընթացների ազդեցության խնդիրների համալիր վերլուծությամբ: Հետազոտությունն ընդլայնում և խորացնում է անջատողականության երևույթի քաղաքական չափումների, Կատալոնիայի անջատողականության առանձնահատկությունների և ԵՄ-ի «վերազգային-ազգային-տարածաշրջանային» ինստիտուտների փոխգործության վերաբերյալ պատկերացումները:

Հետազոտության կիրառական նշանակությունը պայմանավորված է նրանով, որ դրանում դիտարկված հիմնախնդիրները և եզրահանգումները կարող են օգտագործվել անջատողական հակամարտությունների մասնավոր դեպքի վերլուծությունների, էթնիկ համայնքների միջև փոխհարաբերությունների կարգավորման, ներքաղաքական ճգնաժամերի հաղթահարման համար: Ատենախոսության արդյունքները կարող են օգտագործվել Ղարաբաղյան հիմնախնդրի իրավական և քաղաքական իրողությունների խեղաթյուրման կանխման և Հայաստանի արտաքին քաղաքականության հետագա քայլերի մշակման համար: Դրանք կարող են կիրառվել նաև ԵՄ-ի քաղաքական գործընթացներով հետաքրքրվող տարբեր գերատեսչությունների կողմից: Ատենախոսության դրույթները կարող են օգտակար լինել գիտահետազոտական և ուսումնամանկավարժական ձեռնարկների պատրաստման համար:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսության հիմնական դրույթները և արդյունքները քննարկվել են ՀՀ պետական կառավարման ակադեմիայի «Քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության» ամբիոնում, ՀՀ ՊԿԱ հիմնադրման 25-ամյակին

նվիրված «Կառավարման ժամանակակից հիմնախնդիրները» 2-րդ միջազգային գիտաժողովում (2019 թ.), ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ուսումնամեթոդական հավաքներում, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի Անվտանգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի տարածաշրջանային ռազմավարական վերլուծությունների կենտրոնի նիստերում, Եվրոպական համալսարանի «Իրավագիտության և միջազգային հարաբերություններ» ֆակուլտետի գիտական սեմինարներում և այլն: Ատենախոսության որոշ դրույթներ ներառվել են ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի «Պետության ռազմական անվտանգություն» վերապատրաստման և «Պետական և ռազմական կառավարում» մագիստրոսական ծրագրերում: Ատենախոսության հիմնական դրույթները տպագրվել են 10 գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ ութ ենթագլուխներով, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության ընդհանուր ծավալը 135 էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվում են հետազոտվող թեմայի արդիականությունը, գիտական նորույթը, նպատակն ու խնդիրները, օբյեկտը, առարկան, հետազոտության մեթոդները, աշխատանքի տեսական և կիրառական նշանակությունը:

«Անջատողականության հայեցակարգային հիմքերի վերլուծությունը և անջատման գործընթացի առանձնահատկությունները» խորագրով առաջին գլխում դիտարկել ենք անջատողականության հայեցակարգային հիմնական մոտեցումները, և գիտության տարբեր ճյուղերի կողմից անջատողականության վերաբերյալ տարատեսակ մեկնաբանությունները: Առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ վերնագրված **«Անջատողականության հասկացութային բնորոշումները և առաջացման պատճառները»,** քննարկվել են «անջատողականություն» («սեպարատիզմ»), «սեցեսիոնիզմ», «ավտոնոմիզմ», «քաղաքական բաժանում», «անկախություն» հասկացությունների առանձնահատկությունները: Անդրադարձ է կատարվել անջատողականության ծագմանն ու պատմական էվոլյուցիային, ինչպես նաև անջատողականության ակտիվացման պատճառներին ու նպաստող գործոններին:

Երկրորդ ենթագլխում՝ **«Անջատումը որպես քաղաքական գործընթաց և անջատման իրավական կողմը»** վերնագրով, անջատումը դիտարկվում է որպես քաղաքական գործընթաց՝ պետությունների կազմում տարածքային կազմակերպման ձևի փոփոխման և տարածքների մասնատման խնդիրների շրջանակներում: Անջատման իրավունքը՝ որպես ժողովուրդների ինքնորոշման իրավունքի տարր քննվել է միջազգային և սահմանադրական իրավունքի շրջանակներում, միևնույն ժամանակ քննարկել ենք Քվեբեկի և Շոտլանդիայի համաձայնեցված անկախության հանրաքվե անցկացնելու իրավական և

քաղաքական նախադրյալները: Տվյալ ենթագլխում ուսումնասիրել ենք «վերականգնողական անջատման» («remedial secession») սկզբունքի առանձնահատկությունները:

Երրորդ ենթագլխում՝ **«Եվրոպական միության անդամ-պետություններում գործող անջատողական շարժումների հիմնական տիպերը»** վերտառությամբ, իրականացվել է անջատողական շարժումների դասակարգման խնդիրներին վերաբերող համեմատական վերլուծություն: Բացահայտվել է ազգայնականության պետականաստեղծ, ծայրամասային, իռիդենտիկ, միավորող տեսակների և անջատողականության միջև եղած կապը: Անջատողականության դասակարգումը իրականացվել է ըստ անջատողական խմբավորման սահմանած նպատակայնության ու արդյունքի, և ըստ անջատողականության առավել ցայտուն արտահայտված գործոնների:

«Կատալոնիայի անջատողականության առանձնահատկությունները և անջատողականության դեմ պայքարի Իսպանիայի քաղաքականությունը» խորագրով երկրորդ գլխում Կատալոնիայի անջատողականության հիմնախնդիրը դիտարկվել է Իսպանիայի ներքաղաքական գործընթացների և «կենտրոնական իշխանություն-ինքնավար համայնք» ինստիտուցիոնալ փոխհարաբերությունների շրջանակներում: Երկրորդ գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ վերնագրված **«Իսպանիայի կենտրոնական իշխանության և ինքնավար համայնքների ինստիտուցիոնալ փոխհարաբերությունների առանձնահատկությունները»**, քննարկվել են Իսպանիայի կենտրոնական իշխանության և ազգային ինքնավար համայնքների ինստիտուցիոնալ փոխհարաբերությունների առանձնահատկությունները: Վերլուծվել են Իսպանիայի ժողովրդավարության անցման փուլում վարչատարածքային բաժանման և համայնքային միավորումներին ինքնավարության կարգավիճակ տրամադրելու խնդիրները, Իսպանիայի կառավարման համակարգում կենտրոնական իշխանության և ինքնավար համայնքների իրավասությունների շրջանակը, ինքնավար համայնքերին տրվող քաղաքական, տնտեսական, մշակութային, լեզվական արտոնությունների շրջանակը:

Երկրորդ ենթագլխում՝ **«Կատալոնիայի անջատման գործընթացի վերլուծությունը ըստ խաղերի տեսության»** վերնագրով, խաղերի տեսության միաժամանակյա և հաջորդական գործողությունների մաթեմատիկական մոդելավորմամբ վերլուծվել են Իսպանիայի կենտրոնական իշխանության և Կատալոնիայի անջատողական շարժման վարքային ռազմավարությունները: Տվյալ ենթագլխում կարևորվել է խաղերի տեսության մաթեմատիկական մոդելավորման կիրառմամբ ներքաղաքական հակասությունների վերլուծությունը: Կատալոնիայի անջատողականության վերլուծությունում խաղերի տեսության կիրառմամբ փորձ է կատարվել գտնել Կատալոնիայի հիմնախնդրի փոխզիջումային կարգավորման և հնարավոր

համագործակցության ուղիները:

Երրորդ ենթագլխում՝ **«Անջատողականության դեմ պայքարի եղանակները. Կատալոնիայի անջատողականությանը հակազդելու Իսպանիայի փորձը»** վերտառությամբ, ներկայացվել են անջատողականության դեմ պայքարի ոչ բռնի եղանակները, և մասնավորապես՝ Իսպանիայի փորձը: Քննարկվել են անջատողականության հակազդման իրավական, անվտանգային-քաղաքական, քաղաքակրթական-մշակութային գործիքակազմի կիրառման արդյունավետությանը վերաբերող հիմնահարցերը: Անդրադարձ է կատարվել ինչպես Իսպանիայի կառավարության, այնպես էլ ԵՄ-ի ինստիտուտների անջատողականության հակազդման լիազորությունների շրջանակներին:

«Եվրոպական միության ինտեգրային գործընթացների ազդեցությունը Կատալոնիայի անջատողականության ակտիվացման վրա» խորագրով երրորդ գլխում Կատալոնիայի անջատողականության ակտիվացման միտումներն ուսումնասիրված են ԵՄ-ի ինտեգրային գործընթացների համատեքստում: Երրորդ գլուխը բաղկացած է երկու ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ վերնագրված **«Եվրոպական «ազգ-պետությունների» կերպափոխումը անջատողականության և ինտեգրային գործընթացների համատեքստում»**, քննարկվել են եվրոպական ինտեգրային գործընթացներում «ազգ-պետության» ինստիտուտի դերի նվազման և «անդամ-պետության» իրավասուբյեկտայնության կարգավիճակին վերաբերող հիմնահարցերը: Վերլուծվել է արդի ԵՄ-ում ընթացող երկու հիմնական քաղաքական գործընթացների՝ ինտեգրացիայի և տարածաշրջանային անջատողականության փոխազդեցության շրջանակը, մասնավորապես՝ ԵՄ-ի ինտեգրացիայի խորացման և Կատալոնիայի անջատողականության ակտիվացման միջև եղած կապը:

Երկրորդ ենթագլխում՝ **«Կատալոնիայի և Եվրոպական միության ինստիտուցիոնալ փոխգործակցության խնդիրները ինտեգրային գործընթացներում»** վերտառությամբ, եվրոպական ինտեգրացիայի նեոֆունկցիոնալիզմի, լիբերալ միջկառավարականության, նոր ինստիտուցիոնալիզմի, բազմամակարդակ կառավարման տեսությունների շրջանակում վերլուծության է ենթարկվել Կատալոնիայի անջատողականության ակտիվացման վրա ԵՄ-ի ինտեգրացիայի խորացման, նրա տարածաշրջանային քաղաքականության, ԵՄ-Կատալոնիա ինստիտուցիոնալ փոխգործակցության ազդեցությունը: Ներկայացվել է նաև ԵՄ-ի որոշումների կայացման գործընթացում Կատալոնիայի տարածաշրջանային ինստիտուտների դերակատարությանը վերաբերող որոշ հիմնահարցեր:

Եզրակացության մեջ ամփոփված են հետազոտության հիմնական արդյունքները, որոնցից հարկ է առանձնացնել հետևյալը.

1. Անջատողականությունը համարվում է ինքնիշխան պետության տարածքում էթնիկ միավորումների անկախության, ինքնավարության

տրամադրման կամ ինքնավարության լիազորությունների մեծացման քաղաքական պահանջ: Եվրոպայում քաղաքական իսլամի աճով պայմանավորված անջատողականության հասկացութային ապարատն ընդլայնվել է և ներառում է նաև այլ էթնիկ խմբերի կողմից պետական ինստիտուտների վերահսկողությունից դուրս կրոնական, մշակութային, քաղաքական կառույցների ստեղծումը: Անջատողականության առաջացման հիմնական պատճառները բխում են տնտեսական շահագործման, մշակութային ինտեգրացիայի, կենտրոնական իշխանության նկատմամբ վստահության բացակայության, բռնի կերպով միացման խնդիրներից:

2. Անջատողականության դասակարգման հիմքում ընկած է լինում անջատման համաձայնեցվածության կամ անհամաձայնեցվածության լինելու սկզբունքը: Սեցեսիական, իռիդենտական և ինքնավարության ձգտող անջատողական շարժումներն ունեն անհամաձայնեցվածության սկզբունք և դիտարկվում են որպես միակողմանի անջատման փորձեր: Բաժանման ձգտող անջատողական շարժումների նպատակը կենտրոնական իշխանության քաղաքական համաձայնությամբ անկախության հասնելն է: Իսկ ըստ անջատողականության առավել ցայտուն արտահայտված դրսևորումների՝ եվրոպական անջատողական շարժումները հիմնականում լինում են՝ էթնիկ, լեզվական, ծայրամասային:

3. Անջատումը ըստ էության ոչ միայն անջատողականության արդյունք է, այլև դիսֆունկցիոնալ բնույթ ունեցող քաղաքական գործընթաց: Անջատումը համարվում է նաև որպես ներքևի նախաձեռնություն՝ ուղղված պետության կառուցվածքային ձևի փոփոխմանը և քաղաքական իշխանության վրա ազդեցություն գործելուն: Անջատման գործընթացում քաղաքացիական մասնակցության դրսևորումները հիմնականում արտահայտվում են տեղական և համայնքային ընտրություններում՝ անջատողականությանն աջակցող կուսակցությունների օգտին քաղաքացիների քվեարկությամբ: Անջատման իրավունքը միջազգային իրավական համակարգում չունի հստակ ամրագրում և անջատման իրավունքին վերաբերող ամենակարևոր հարցերը մեծամասամբ քննարկվում են մարդու հիմնարար իրավունքների ոտնահարման վերացման համատեքստում:

4. Իսպանիայի քաղաքական գործընթացներում անջատողական շարժումներն ունեն մեծ դերակատարություն, քանի որ նրանց գործունեությունը մշտապես սպառնացել է պետության տարածքային ամբողջականությանը: Իսպանիայում ժողովրդավարացումից հետո որդեգրվեց ապակենտրոնացված վարչատարածքային բաժանման սկզբունքը՝ նպատակ հետապնդելով որոշակիորեն բավարարելու «պատմական ազգությունների» (*historic nations*) ինքնավարությանը վերաբերող քաղաքական պահանջները: Իսպանիայում անջատողականության դրսևորումների ակտիվացումը կապված է կենտրոնական իշխանության՝ ինքնավար համայնքներից յուրաքանչյուրի հետ ունեցած ինստիտուցիոնալ ասիմետրիկ իրավահարաբերություններով:

Իսպանիայի համայնքային ինքնակառավարման խնդիրներին վերաբերող հակասությունները քաղաքական երանգ են ստացել՝ ստեղծելով «կենտրոն-պերիֆերիա» ինստիտուցիոնալ հարաբերությունների խզման սպառնալիքներ:

5. Տեղեկատվահաղորդակցային տեխնոլոգիաների զարգացման արդի պայմաններում քաղաքական գործընթացների նորովի մեկնաբանման անհրաժեշտություն է առաջանում. այս դեպքում կարևորվում է խաղերի տեսության շրջանակներում հակամարտությունների մոդելավորման նոր մոտեցումների առաջքաշումը: Կատալոնիայի անջատողական հակամարտության մոդելավորման համար խաղերի տեսության միաժամանակյա և հաջորդական գործողությունների տրամաբանությամբ վերլուծության իրականացումը բավականին արդյունավետ է, հատկապես Իսպանիայի կառավարության և Կատալոնիայի ինքնավար համայնքի կիրառած ռազմավարությունների բացահայտման, խաղի ընդհանուր տրամաբանության, կողմերի գործողությունների օպտիմալ ռազմավարությունների և հավանական զարգացումների որոշման համար:

6. Կատալոնիայի անջատողականության զսպման Իսպանիայի ռազմավարությունն ուղղված է պետության տարածքային ամբողջականության պահպանման և ապակենտրոնացված կառավարման միջև ճիշտ փոխհարաբերության հաստատմանը, որը պետք է բխի Իսպանիայի ժողովրդավարական արժեհամակարգից: Կատալոնիայի ինքնավար համայնքի անջատողականության ռազմավարությունն ուղղված է Իսպանիայում Կատալոնիայի հարկաբյուջետային ինքնավարության ընդլայնմանը և ԵՄ-ի որոշումների կայացման գործընթացում Կատալոնիայի ինքնավար համայնքի քաղաքական դերի մեծացմանը: 2017 թ. Կատալոնիայի անկախության անհամաձայնեցված հանրաքվեի անցկացումը և դրան հաջորդած քաղաքական գործընթացները ոչ թե լուծեցին հակամարտությունը, այլ ավելի խորացրին Իսպանիայի ներքաղաքական ճգնաժամը՝ վտանգելով փոխշահավետ լուծման հասնելու հեռանկարները:

7. Անջատողականության դեմ պայքարի հաջողությունը կախված է անջատողականության ակտիվացման կանխարգելիչ միջոցառումների արդյունավետությունից և պետության կողմից անջատողականությանը հակազդելու համարժեք քաղաքականություն մշակելու ունակությունից: Տարածքային ամբողջականության վիճարկումը, քաղաքական անհամաձայնության հայտնումը, միջազգային ներգրավվածության, ինքնուրույնության ձեռքբերման, միջազգային ճանաչման կանխումը, բազմամշակութայնության քաղաքականության կիրառումը դիտարկվել են որպես անջատողականության դեմ պայքարի արդյունավետ, ոչ բռնի եղանակներ: Կատալոնիայի անջատողականության դեմ պայքարում Իսպանիան կիրառում է «ազգությունների» և «տարածաշրջանների» հավասարեցմամբ համայնքներին ինքնավարության տարբերակված կարգավիճակի տրամադրման ռազմավարությունը:

8. ԵՄ-ի ինստիտուցիոնալ համակարգի ներդրմամբ սահմանափակվեց եվրոպական «ազգ-պետությունների» ինքնիշխանությունը: Կատալոնիայի համայնքային իշխանությանը տրվող աջակցությունը ԵՄ-ի ինտեգրացիայի շնորհիվ մեծացվեց: Այդ հանգամանքը խթանեց Կատալոնիայի ինքնուրույնությանը և որոշումների կայացման ազգային և վերազգային մակարդակներում բարձրացրեց համայնքային ինստիտուտների դերակատարությունը: Այս ամենը Կատալոնիայի տարածաշրջանային ինստիտուցիոնալ մարմիններին տվեց «ինքնավստահություն», և նրանք իրենց տնտեսական զարգացման տեմպերի աճը, քաղաքական ազատության մեծացումը պայմանավորեցին ոչ թե Իսպանիայի կառավարության քաղաքականությամբ, այլ ԵՄ-ի ինտեգրացիայով: ԵՄ-ի վերազգային մարմինները որոշակի չափով թուլացրին Իսպանիայի քաղաքական ինստիտուտների դերը, ինչն էլ նպաստեց Կատալոնիայի անջատողականության ակտիվացմանը:

9. ԵՄ-ի ինտեգրացիայի նեոֆունկցիոնալիզմի, լիբերալ միջկառավարականության, նոր ինստիտուցիոնալիզմի և բազմամակարդակ կառավարման տեսական մոտեցումների վերլուծությունը փաստում են Կատալոնիայի անջատողականության և ԵՄ-ի ինտեգրային գործընթացների փոխկապվածությունը: ԵՄ-ի ինտեգրային հարաբերությունների խորացումը նպաստում է ԵՄ-ի որոշումների կայացման գործընթացում Կատալոնիայի տարածաշրջանային ինստիտուտների դերակատարության մեծացմանը: Կատալոնիայի և ԵՄ-ի ինստիտուտների միջև փոխգործության խորացումն անուղղակիորեն ազդում է Իսպանիայի և Կատալոնիայի ինստիտուցիոնալ հարաբերությունների վատթարացման վրա:

Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլվել են հետևյալ գիտական հոդվածներում՝

1. Ավետիսյան Ռ., Եվրոպական միության ինտեգրային գործընթացների արդի մարտահրավերները փոփոխվող աշխարհակարգում (ռազմավարական-անվտանգային գնահատում), «Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր», հասարակական գիտություններ, պրակ 1, Ստեփանակերտ, 2022, էջ 246-257:
2. Ավետիսյան Ռ., Անջատման իրավունքի հայեցակարգային հիմքերը և դրա առնչությունը Ղարաբաղյան հիմնախնդրին, «Հայկական բանակ» 3 (109), Երևան, 2021, էջ 40-48:
3. Ավետիսյան Ռ., Բազմամշակութայնության քաղաքականության խնդիրները Եվրոպական միության անջատողական շարժումների ակտիվացման համատեքստում, «Բանբեր ԵՄՀ», 1, Երևան, 2021, էջ 36-48:
4. Մարգարյան Մ., Ավետիսյան Ռ., Խաղերի տեսությունը՝ որպես ինքնորոշումային հակամարտությունների վերլուծության մեթոդ. Կատալոնիայի օրինակով, «Հայկական բանակ» 3 (105), Երևան, 2020, էջ 90-104:
5. Ավետիսյան Ռ., Աբխազիայում Եվրոպական միության ներգրավվածության քաղաքականությունը և դրա իրականացման հնարավորություններն Արցախում, «Հայկական բանակ» 2 (104), Երևան, 2020, էջ 39-51:
6. Ավետիսյան Ռ., Եվրոպական անջատողական շարժումների հիմնական տիպերի համեմատական վերլուծություն, «Եվրոպական Համալսարան» գիտական հոդվածների ժողովածու, № 11 (1), Երևան, 2020, էջ 557-565:
7. Ավետիսյան Ռ., Անջատողականության պատճառներն ու նպաստող գործոնները, «Հանրային կառավարում», 1/2020, Երևան, 2020, էջ 204-213:
8. Ավետիսյան Ռ., Անջատողականության ծագումը և էվոլյուցիան, ՀՀ ՊԿԱ հիմնադրման 25-ամյակին նվիրված «Կառավարման ժամանակակից հիմնախնդիրները» 2-րդ միջազգային գիտաժողովի նյութեր, հոկտեմբեր 08-09, Երևան, 2019, էջ 206-214:
9. Ավետիսյան Ռ., Քաղաքական անջատողականության էությունն ու բնույթը, «Գիտական Արցախ», № 1 (2), Երևան, 2019, էջ 74-81:
10. Ավետիսյան Ռ., Պետությունների անջատման պատճառները և ինտեգրման եվրոպական դիալեկտիկան, «Եվրոպական Համալսարան» գիտական հոդվածների ժողովածու, № 9 (1), Երևան, 2018, էջ 333-341:

АВЕТИСЯН РАФИК ГУРГЕНОВИЧ

ПРОБЛЕМА СЕПАРАТИЗМА В ГОСУДАРСТВАХ-ЧЛЕНАХ ЕВРОПЕЙСКОГО СОЮЗА: ОСОБЕННОСТИ СЕПАРАТИЗМА В ИСПАНИИ НА ПРИМЕРЕ КАТАЛОНИИ

Диссертация на соискание ученой степени кандидата политических наук по специальности 23.00.02 – "Политические институты и процессы".
Защита состоится 28 сентября, 2022 г., в 13:00 часов на заседании специализированного совета 056 "Политология и международные отношения" ВАК РА, действующего по адресу ул. А. Манукяна 1, 0025, г. Ереван, Республика Армения.

РЕЗЮМЕ

Целью диссертационной работы являетса выявление политические измерения проблемы сепаратизма, установление особенности сепаратизма Каталонии в Испании и влияние интеграционных процессов ЕС на активизацию сепаратизма Каталонии. В связи с этим основные проблемы данного исследования связаны с анализом концептуальных основ сепаратизма, выявлением причин и факторов, способствующих активизации сепаратизма, сравнительным анализом основных типов сепаратистских движений, изучением особенностей правовых и политических интерпретаций сепаратизма.

В данном научном изыскании особую значимость приобрели вопросы изучения сепаратистского движения Каталонии в контексте политических процессов Испании, анализа механизмов противодействия сепаратизму и анализа поведенческих стратегий *(behavioral strategies)* центральной власти Испании и сепаратистского движения Каталонии путём математического моделирования последовательных действий теории игр. Особое внимание было уделено также выявлению влияния интеграционных процессов ЕС на активизацию сепаратизма Каталонии и анализу роли региональных институтов Каталонии в процессе принятия решений ЕС. Научно-теоретическая значимость диссертационной работы обусловлена комплексным анализом проблем влияния интеграционных процессов ЕС на сепаратизм Каталонии и его активизацию. Исследование расширяет и углубляет понимание политических измерений феномена сепаратизма, особенностей сепаратизма Каталонии и взаимодействия «наднациональных-национальных-региональных» институтов ЕС.

Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы и приложения.

В первой главе **«Анализ концептуальных основ сепаратизма и особенностей процесса сецессии»** автором были рассмотрены

концептуальные определения сепаратизма, были затронуты происхождение сепаратизма, его историческая эволюция, а также причины и факторы, способствующие активизации сепаратизма. В данной главе сецессия рассматривается как политический процесс, а право сецессии как элемент права народов на самоопределение. Особое внимание было обращено также на вопросы, касающиеся классификации основных типов сепаратистских движений, действующих в государствах-членах ЕС. Классификация сепаратизма осуществлялена по принципам целеустремленности и результата, установленным сепаратистской группировкой, а также по наиболее ярко выраженным факторам сепаратизма.

Во второй главе под заглавием **«Особенности сепаратизма Каталонии и политика Испании в борьбе с сепаратизмом»** рассматривается проблема сепаратизма Каталонии в контексте внутриполитических процессов Испании и институциональных взаимоотношений между центральной властью и автономным сообществом. Посредством математического моделирования одновременных и последовательных действий теории игр были проанализированы поведенческие стратегии центральной власти Испании и сепаратистского движения Каталонии. В анализе сепаратизма Каталонии с применением теории игр была предпринята попытка найти возможные пути компромиссного урегулирования проблемы Каталонии и устанавления сотрудничества между сторонами конфликта. Были обсуждены вопросы, касающиеся эффективности применения правового, безопасностно-политического, цивилизационно-культурного инструментария противодействия сепаратизму. Были затронуты рамки полномочий как правительства Испании, так и институтов ЕС по противодействию сепаратизму.

В третьей главе - **«Влияние интеграционных процессов Европейского союза на активизацию сепаратизма Каталонии»** - тенденции активизации сепаратизма в Каталонии исследуются в контексте интеграционных процессов ЕС. Проанализированы рамки взаимодействия двух основных политических процессов, происходящих на современном этапе в ЕС, - процессы интеграции и регионального сепаратизма, в частности, взаимосвязь между углублением интеграционных процессов ЕС и активизацией сепаратизма в Каталонии. В рамках теорий евроинтеграции, неофункционализма, либеральной межправительственности, нового институционализма, многоуровневого управления, было проанализировано влияние интеграционной политики ЕС на активизацию сепаратизма в Каталонии и институциональное взаимодействие ЕС-Каталония. Были также представлены некоторые вопросы, касающиеся роли региональных институтов Каталонии в процессе принятия решений ЕС.

RAFIK AVETISYAN

THE ISSUE OF SEPARATISM IN THE MEMBER STATES OF THE EUROPEAN UNION: FEATURES OF SEPARATISM IN SPAIN ON THE EXAMPLE OF CATALONIA

Dissertation under 23.00.02 - "Political Institutions and Processes" aspiring to earn PhD in Political Science.
The public defense will take place on September 28, 2022, at the Yerevan State University, at 056 "Political Science and International Relations" HAC Specialized Chamber session (Address A. Manukyan str. 1, Yerevan 0025, Republic of Armenia).

SUMMARY

The aim of the thesis is to highlight the political dimensions of the separatism problem, to identify the characteristics of Catalan separatism in Spain and the influence of EU integration processes on the activation of Catalan separatism. In this regard, the main problems of the research are related to the analysis of the conceptual foundations of separatism, the identification of the causes of separatism and the factors contributing to its activation, the comparative analysis of the main types of separatist movements, the study of the peculiarities of legal and political interpretations of separatism. The study of the Catalan separatist movement in the political processes of Spain, the analysis of separatist countermeasures, and the analysis of the behavioral strategies of the central government of Spain and the Catalan separatist movement by mathematical modeling of the sequential actions of the game theory were also highlighted. Particular attention was also paid to the identification of the impact of EU integration processes on the activation of separatism in Catalonia and the analysis of the role played by regional institutions of Catalonia in the EU decision-making process.

The scientific importance of the thesis is due to the analysis of the problems of the separatism of Catalonia and the impact of the EU integration processes on its activation. The research broadens and deepens the understanding of the political dimensions of the phenomenon of separatism, the characteristics of separatism in Catalonia, and the interaction of the "supranational-national-regional" institutions of the EU.

The thesis consists of an introduction, three chapters, a conclusion, a list of references, and an annex.

In the first chapter, "**Analysis of the conceptual bases of separatism and features of the process of secession**", we considered the conceptual definitions of separatism, referred to the origin of separatism, its historical evolution, as well as the reasons and contributing factors for the activation of separatism. This chapter

considers secession as a political process, and the right to secession as an element of peoples' right to self-determination. Issues related to the classification of the main types of separatist movements of the EU member states also received special attention. The classification of separatism was carried out according to the goal and result defined by the separatist group, and according to the most pronounced factors of separatism.

In the second chapter, **"Features of Catalonia's separatism and Spain's anti-separatism policy"**, we considered the issue of Catalonia's separatism within the framework of Spain's internal political processes and "central government-autonomous community" institutional relations. The behavioral strategies of the central government of Spain and the separatist movement of Catalonia were analyzed by mathematical modeling of simultaneous and sequential actions of game theory. In the analysis of the separatism of Catalonia, an attempt was made to find the ways of a compromise settlement of the Catalan issue and possible cooperation by applying the games theory. The issues related to the effectiveness of the use of the legal, security-political, civilizational-cultural tools for countering separatism were discussed. Reference was made to the powers of both the Spanish government and EU institutions in the political struggle against separatism.

In the third chapter, **"The influence of the European Union integration processes on the activation of Catalan separatism"**, the tendencies of the activation of separatism in Catalonia are studied in the context of the integration processes of the EU. The scope of interaction between the two main political processes taking place in the modern EU, integration and regional separatism, was analyzed, in particular, the relationship between the deepening of EU integration and the activation of separatism in Catalonia. Within the framework of neo-functionalism, liberal intergovernmentalism, new institutionalism, and multi-level governance European integration theories, the impact of deepening EU integration, its regional policy, EU-Catalonia institutional interaction on the activation of separatism in Catalonia was analyzed. Some issues related to the role of Catalan regional institutions in the EU decision-making process were also presented.